ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԵՎՈՐԳ ՔԱՀԱՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ
(1888—1956)

Նոյեմբերի 16-ին, Լենինական, իր բնակարանում վախճանվեց Ս. Աստվածածին եկեղեցու ծխատեր արժանապատիվ Տ. Գեւորգ ավագ քահանա Գեւորգյանը։

Հանգուցյալ Տ. Գեւորգ ավագ քահանա Գեւորգյանը ծնվել է 1888 թվականին Աղինի շրջանի Սառնաղբյուր գյուղում։ Հանգուցյալի հայրը՝ Ղազար Գեւորգյան, մասնավոր հոգածություն է ցուցաբերել փոքրիկ Համազասպի հանդեպ, նրա մեջ տեսնելով հոգեւորականի կոչում և նվիրում։ Նա իր նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի ծխական դպրոցում։ Իր քաղցրահնչյուն ձայնի և հոգեւորական ասպարեզի հանդեպ ցույց տված նվիրման շնորհիվ սիրելի դառնալով իր հայրենակիցներին, Երջանկահիշատակ Գեւորգ Ե Սուրենյանց կաթողիկոսի կարգադրությամբ 1916 թվականին քահանա է ձեռնադրվում իր գյուղի համար, որտեղ քահանայագործում է մինչև 1928 թվականը։ 1928 թվականից հետո Թբիլիսիի առաջնորդարանի կարգադրությամբ 12 տարի քահանայագործում է Կախեթի եկեղեցում, արժանանալով հավատացյալների հարգանքին։ 1940—1947 թվականներին պաշտոնավարում է Թբիլիսիում։ Երջանկահիշատակ Գեւորգ Զ կաթողիկոսի կարգադրությամբ 1947 թվականին ծխատեր քահանա է նշանակվում Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում, որտեղ քահանայագործում է մինչև իր մահը։

Հոգելույս Տ. Գեւորգ Զ Հայրապետը, գնահատելով Տ. Գեւորգ քահանայի անձնվեր ծառայությունը Հայ եկեղեցուն և ժողովրդին, լանջախաչ էր շնորհել նրան, իսկ Նորին Ս. Օծություն Տ. Վազգեն Ա Հայրապետը, ներկա տարվա հուլիս ամսին, հայրապետական կոնդակով ավագ քահանայության պատվին էր արժանացրել հանգուցյալին։

Տ. Գեւորգ քահանայի մահով մեր քահանայական դասը կորցնում է մի արժանավոր և իր կոչման գիտակ հոգեւորական։ Շիրակի հավատացյալների սրտում միշտ կենդանի կմնա իրենց հոգեւոր հովվի՝ լուսահոգի Տ. Գեւորգ քահանա Գեւորգյանի պայծառ անունն ու հիշատակը։

Հավիտենական հանգիստ իր աճյունին և խաղաղություն՝ իր հոգուն։